

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷ — Ապտին Ժողով

ՄՈՒԴԱԹԹԱՄԻ ճիշդ դիմաց

Pour les annonces s'adresser

à la Rédaction du Journal PHAROS

LE CAIRE — RUE ABDIN

vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒԻՆ

Մէկ անգամի համար տողը 3 ՂՂ. ողջ

Մէկ անգամի աւելի ծանուցումներու հա-

մար մասնաւոր պայմաններ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան . . . . . ՂՂ. ողջ 100

Վեցամսեայ . . . . . » 55

Նոսմանայ . . . . . » 30

ՕՅԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Տարեկան . . . . . Ձր. 26

Վեցամսեայ . . . . . » 14

ԵՏ ՁԻ ՏՐՈՒԻՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԱՄ

ՈՒՆԻ Է ԳՐՈՒԹԻՒՆ



# ՓԱՐՈՍ

## Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր — Յ. ԱԼՓԻԴԻՐ

### ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Ինչպէս մեր առաջին թուով ծա-  
նուցած ենք, «Փարոս»-ի տնօրէնու-  
թիւնը իր բոլոր ուղղութիւնները և  
ժամանակը թերթին խմբագրութեան  
և անոր զարգացման նուիրել կարե-  
նալու համար, այս անգամ մատա-  
կարարութեան ճիւղը բոլորովին  
զատած է խմբագրութենէն։ Քա-  
ղաքիս պատուաւոր սեղանաւորներէն  
ՄԵՏ. ՄԱՐԳՐԻՍ ԷՃ. ՄԻՐԱՆԻԱՆ Բա-  
րեհաճած է ստանձնել այդ ճիւղը։  
Հետեւեալը այսօրուէն սկսեալ «Փա-  
րոս»-ի հին և նոր բաժնեգիրներու  
և վճարեալ հրատարակութեանց այն  
ստացականները միայն վաւերական  
են որոնք տնօրէնութեան կնիքը և  
միևնոյն ատեն Միւրանեան ԷՃ-նորի  
ստորագրութիւնը կը կրեն։

Միւրանեան ԷՃ-նորի գործատե-  
ղին է ի Պապ-Էլ-Սալա, Կառավար-  
չական Պալատան գիմաց։

### AVIS IMPORTANT

La direction du «Pharos» a l'hon-  
neur de porter à la connaissance de  
ses abonnés et du public en général,  
qu'ayant confié l'administration du  
journal à M. SARKIS MIRANIAN, à Bab-  
el-Khalk, en face du Gouvernorat,  
tous les reçus tant pour les abon-  
nements que pour les annonces doivent  
porter la signature de l'Administra-  
teur conjointement avec le cachet de  
la Direction.

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

#### ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Ապահովաբար մակեդոնական հար-  
ցըն է որ կը կազմէ Արեւելեան խն-  
դրին ամենէն դիւրաւաւ կողմը։  
Եթէ պէտք է հաւատք ընծայել չըր-  
ոյ այլապէս լուրերուն, մօտաւոր ա-  
պայի մը մէջ հանդիսատես պիտի  
ըլլանք այս խնդրին վերաբարձման։  
Արդարեւ, կը հաւատեն թէ՛ Մա-  
կեդոնական նոր դոմիթէն, որուն  
նախագահներն են դասախօս Սթո-  
յեան Միխայիլովիչ և զօրավար Ջան-  
չէֆ բանակցութեան մէջ պիտի մըտ-

նէ, քիչ ատենէն, Բ. Դրան կամ  
ինչ որ նոյնն է, Սուլթանին կառա-  
վարութեան հետ, Մակեդոնիոյ նա-  
հանգներուն մէջ բարենորոգումնե-  
րու գործադրութիւնը ստանալու հա-  
մար, ի փոխարէն խոստանալով դադ-  
րեցնել յեղափոխական ուժէ շարժումը։  
Կ'աւելցնեն, նաեւ, թէ, — և հոտ է  
լուրին կարեւոր կէտը — Ֆէրիստան  
խիւանը մտադիր է իր աշակցու-  
թիւնը չնորհել բանակցութեանց յա-  
ջող ելքին համար։ Այս աշակցութիւնը  
բոլորովին անհաւանական չը թուի  
թէ ի նկատի առնենք թէ յիշեալ  
գոմիթէին նախագահները կը պատ-  
կանին ազատագրականներու այն  
հատուածին զոր պաշտօնական շրջա-  
նակներու մէջ կը հաճին իբր ջախջա-  
խութեամբ նկատել։ Միւս կողմէ, ոչ  
նուազ լաւատեղեակ աղբիւրներէ կը  
ծանուցանեն որ, նախկին դոմիթէն  
կամ աւելի ճիշդը՝ նախկին նախա-  
գահ համբաւաւոր Պօրիս Սարաֆօֆը  
և իր արքանեակները — որոնք ծայ-  
րայեղ և անմիջական գործողութեան  
կողմնակիցներ են — տենդոս գոր-  
ծունէութիւն մը ցոյց կուտան այս  
պահուս, առանց յարգելու սակայն  
զազոնապահութեան կանոնը, ընդ-  
հանուր ապստամբութիւն մը կազ-  
մակերպելու նախապատրաստական  
միջոցները ձեռք առնելով։ Բայց  
պարտաւորուած ենք — փափաքը չը  
թոյլատրելով գործածել թոյլտրուիմ  
բառը — քիչ մը սկստիկ ըլլալ այս  
պատահականութեան նկատմամբ։  
Ձէ՞ որ, ամեն տարի, ձմեռն ժամա-  
նակ, կը լսենք սա մարտագող Բայց  
միօրինակ յանկերգը. ձիւնահալքին  
կ'սպասուի յառաջիկայ գարնան Մա-  
կեդոնիոյ մէջ ապստամբութիւնը յա-  
րուցանելու համար։ . . .

Ստոյգ է թէ միակ ճամբան է այս  
որ կարենայ առաջնորդել նպատա-  
կին։ Արդարեւ, վայրկեան մ'իսկ նե-  
րքի չէ հաւատալ որ Սուլթանը  
— կամ իր միջնորդը նորընտիր Մեծ-  
եպարքոս Սաիտ փաշան — լըջօրէն  
բանակցութեան մտնէ յեղափոխա-  
կան ընկերութեան մը հետ որուն  
առաջարկութիւնները ապահովաբար  
խարսխուած պիտի ըլլան — եթէ ոչ

չէր արժեք նեղութիւնը յանձն առ-  
նել — այնպիսի պայմաններու վրայ  
որոնց հաւանութիւնը իր Խալիֆայի  
գիրքը իսլամութեան առջև ամրա-  
պնդելու բնութիւնը ունենալէ այն-  
քան հեռու է։ Սուլթանին հետ խա-  
ղաղասիրական կամ բարեկամական  
կերպով վէճեր կարգադրելու ակըն-  
կալութիւնը ապշեցնող մոռացում մը  
կ'ենթադրէ այդ եղական բռնակա-  
լին հրէշաբանութեան մասին սա քա-  
նի մը տարուան ընթացքին մէջ ըս-  
տացուած փորձառութեանց։

Դժբաղդաբար, ամեն ինչ չհամըն-  
թանար ապստամբական շարժումը  
դիւրացնելու։ Վիէնայի և Բէթէրս-  
պուրիի դիւանագիտութեանց պաշ-  
տօնական հակակրօնութեան վրայ, կը  
բարդուին նաեւ Մակեդոնիոյ այլա-  
զան ցեղերուն փոխադարձ ատելու-  
թիւնները, կազմելով այն ժխտա-  
կան ուժը որուն չնորհիւ Սուլթանը  
իր իշխանութիւնը պահպանած է  
մինչև հիմա և որուն վրայ այնքան  
կը յուսայ որքան իսլամ Ալպանիա-  
ցիներու վրայ ապստամբութիւնը իր  
ըմբռնած կերպով զսպելու համար։  
Բայց միւս կողմէն, անտարակուսելի  
է որ ապստամբական շարժումը, ա-  
ռանց յաւակնելու անկախօրէն ար-  
տաքին ուժերէն իր նպատակին հաս-  
նիլ, Պալքանեան դրացի Պետու-  
թեանց կողմէն միջամտութեան մը  
կարելիութիւնը կ'ենթադրէ և հե-  
տեւաբար անհրաժեշտ է անով որ  
այսպիսի միջամտութիւն մը իր կար-  
գին, իրեն անմիջական հետեանք  
պիտի ունենար եւրոպական դիւա-  
նագիտութեան վրայ հզօրապէս աշ-  
դելու և զայն գործողութեան մղե-  
լու։ Այն ատեն է որ Արեւելեան  
խնդիրը պիտի բացուէր։ Այն ատեն  
է որ Հայկական խնդիրը — անլուծելի  
կերպով ընկեր Մակեդոնականին —  
իր վերջնական և արդար լուծումը  
ստանալու հաւանականութեանց մե-  
ծագոյն բաղմնապատիկը պիտի ու-  
նենար։

Ա. Ճ.

### ԲԱՌԵՐՈՒՆ ՈՒԺԸ

Հաւատացէ՛ք որ գաղափարներուն ու-  
ժէն աւելի մեծ է։ Կարգ մը ուղեղներու  
համար, այսինքն ուղեղներու մեծամասնու-  
թեան համար՝ բառը ամենազօր է, գերը-  
նական, հրաշագործ՝ Եղիշի լոյսի մը, բաց-  
ուէ Սէզամի մը պէս։ Պարզամիտներուն  
համար բառերը մէյմէկ նախախնամու-  
թիւններ են. ա՛հ, բառին հայրապետական  
բարութիւնը այդպիսիներուն համար, զան-  
ցազիր մըն է պարզապէս. մտածելու հար-  
կէն կ'աղաւտէ, տուրքէն ալ բերքէն ալ.  
Ի՞նչ պէտք կայ բաղդատելու, չափելու,  
ձեւելու, միտքդ յոգնեցնելու գաղափարի  
զուգորդութիւններու կամ տարանջատու-  
ման համար. բառը կայ, բարեկցական,  
ազատաբար, պատրաստ հագուստ, կազմ  
զէնք, անվիճելի վճիռ, անփոփոխ տարազ  
. . .։ Նորին Հեղինակութիւն Բառը միա-  
հեծան վարիչը, բռնակալն է այդ երջանիկ  
ուղեղներուն. երջանի՛կ, այո՛, չեմ հեգներ,  
հեռու յինչն այդ մահացու մեղքը. կրնա՞մ  
հեգնել երբ կը նախանձիմ, երբ կ'սքան-  
չանամ իսկ։ Ես տարաբաղդ ուղեղներ  
գիտիմ, անխնայարու միտքեր որոնք քի-  
միական, ի՞նչ կ'ըսեմ, ալքիմիական աշ-  
խատանքներ են ուր խելքէ երեւակա-  
յութիւնէ չ'անցած փորձեր կը կատարուին  
ամէն օր, ինքզն բառերը անգործում տար-  
բաղադրումներու կ'ենթարկուին հոն,  
իրենց պարունակած իսկութիւնը միշտ  
կը վերլուծուի կնճառ cornue-ներու  
մէջ. նոր գաղափարներու համադրութիւն-  
ներ նոր բառեր կ'արտադրեն նուրբ ալամ-  
պիքներու մէջ, որքան չընդ գիւտեր ևս հոյ-  
ակապ վիժումներ. բայց ո՛րքան վատապ, որքան  
քրտինքով ի՞նչ հանգստութիւն է միտք  
մը ունենալ խանութի պէս, «հալար» և մկ  
առարկաներ» ու վաճառանոցի մը ձեւով  
լիցուած յարդարուած. ամեն ապրանքէն  
կայ, կազմ ու պատրաստ, տեսակներով  
զատաւորուած, եքիֆեթներով, մաւաճներով  
նշանակուած. անանկ որ ուղած գամիշա-  
պէս կարելի է գտնել, ձեռքով դրածի պէս.  
Ի՞նչ կը փափաքիք, գրականութիւն. այս  
կողմն անցէ՛ք, ահա ձեզի (զլիսազիլ  
եթէ կ'ուզէք) Դասականութիւն, Ռօ-  
մանթիզմ, Իրապաշտութիւն, Բնապաշտ-  
ութիւն ևւն, Փիլիսոփայութիւն, դիմացը.  
ահա ձեզի նորէն բառեր . . .

Բառերը մեծամասնութեան համար  
լայ՛ս սլոյոտաներ են զոր ուրիշներ բացած  
են իր հանգստութեան ու երջանկութե-  
անը համար, եւ կան խնդիր որ արհա-  
մարհելով այդ պատրաստ ուղին ուրկէ  
«ամբոխ» կ'երթայ, իրենց ճամբան  
իրենք կը բանան հազար զոռարութե-  
իւններով, փոսերու, լեռներու, կոյս ան-  
տուններու մէջէն . . .

Մեծ է բառերուն ուժը, յառ կայ որ  
հարիւր փաստ կ'արժէ եւ չ'եմ գիտէր որ-  
քան գաղափար եթէ դիտնաս ի ճահ գոր-  
ծածել, վարպետ խաղացողին պէս որ

## Խ. Տ Է Մ Ի Ր Ճ Ե Ա Ն

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ

ԲԵԱՄԷԼ ՓՈՂՈՑ ԹԻՒ 3, ՕԹԷԼ ՇԷՓԸՐՏՈՒ ԴԻՄԱՑ

Ելեքտրական գործիքներով անմիջական և առանց ցաւի ամեն տեսակ  
ակռայի հիւանդութեանց բուժում։ Պատրաստութիւն բնականին յար և  
նման կեղծ ակռաներու, քանթիկներու ոսկիէ, ալիւմինիումէ, փայտէ և  
Ապահով և տոկուն քլօմպաժ, ոսկի, բլաթին, եւայն, ևայն։ Լինտերու  
հիւանդութեանց դարմանում ելեքտրական և ուրիշ միջոցներով։



խուզվելն որ աստիճանականորէն գիտէ. ի ճա՛ն ըստ. որքան հանդէպս կ'ուզես գործածէ՛. բառը անանկ ցեղացուկ ուժով մը օժտու-  
ած է, համոզելութեան անանկ ընթաց-  
ածին ձերք մը ունի որ . . . արձակէ զայն  
նոյն իսկ քար նետող արջին ձախաւեր-  
ութեամբը՝ արդիւնքը յուսացածէ՞ք աւելի  
խոշոր կ'ըլլայ:

Քննադատութիւն կ'ընեն կոր, այնպէս  
չէ՞. միտքը ի՞նչու կը չարչարես, եղբա՛յր  
բառերու նայինք, բառերո՛ւ. անհատնում  
միջերք մը կայ մտքիդ մէջ ի պահ, նայինք  
որք կը յարմարի ներկայ պարագային.  
հեղինակը նկարագրութիւնները կը սիրէ՞  
կոր. չ'ըսե՞ս, իրապաշտ հեղինակ մըն է.  
մէկ քանի սերունդներ աշխատած ու  
գտած են այս բառը քու երջանկութեա-  
նըդ ու օգտիդ համար. ա՛ն գործածէ ապ-  
րանքիդ պէս. ըսէ՛ « իրապաշտ » է. եւ  
ընթերցողներուդ հետ զուէն ալ հաւատա-  
որ վերլուծած, որակած եւ մարդը. կրնաս  
հանգիստ խղճով քննադատ. գրքին մէջ  
քիչ մը վրան-բաց նկարագրութիւններ  
կան. հոգ մի ընէր բնաւ. բնապաշտ բա-  
ռը ողջ ըլլայ. գործը բանը ի՞նչ է որ. ա-  
մանկ պարագաներու համար շինուած է  
եւ հատոր մը քննադատութիւն կ'արժէ :  
—Մէկը պիտի նկարագրե՞ս, պիտի դա-  
տե՞ս, ո՞վ պիտի ելլայ երկար բարակ դի-  
տողութիւններ, մանրագէտներ մէջ բերէ.  
նայինք ըրած եւ աստիճանական կրնաս  
ընել. բառերը օգնութեան կը հասնին քե-  
զի պահեստի բանակի մը պէս. —սքանչե-  
լի բառ մը ըսեմ քեզի. —Յաստէ. կեցցէ՛.  
Յաստէ է. հերիք է. ալ բան մը մաւել-  
ցնենք, ունենդիրներդ պէտք չունին.  
—Կա՛մ, յաւակնո՞ս է. ի՞նչ լուսաբանու-  
թիւն. յաւակնո՞ւ. մարդը դատուած  
վճարած է. եթէ անառակին մէկը հար-  
ցնէ ատոնց թէ ի՞նչ կը հասկնան եսա-  
ստէ եւ յաւակնո՞ս ըսելով, շատ հաւանա-  
կան է որ չի կրնան բացատրել իրենց միտ-  
քը, եւ եթէ հրաշիւք իմն կարենան յա-  
ցատրել, հաջորդ իրենց թէ՛ աշխարհիս  
մէջ ո՞վ իրենց յայտնած իմաստովը՝ ե-  
սաստէ ու յաւակնո՞ս չէ՛... բայց ի՞նչ պէտք  
կայ ասանկ քննութիւններու. փրկութիւն  
պիտի ըլլանք եղբայր. կեանքը աւելի  
պարզ է, ու բառը, պարզութիւնն իսկ...  
—Վիճարանութեան մէջ նեղն եւ մեացեր,  
կամ կ'ուզես՝ գիմացնիդ մէկ հարուածով  
ջախջախել, զո՛ւտ բառ մը. ո՞վ կուտայ  
ինծի բառ մը. «ամբողջ թագաւորութիւն»  
ամբողջ քննադատութիւնն եւ ճշմարտա-  
սիրութիւնն բառի մը փոխարէն կուտան—:

Օրհնեա՛լ ըլլան բառերը, ապրի՛ն ու ապ-  
րեցնեն հասարակ գաղափարներուն տի-  
եղերական յեղը :

Հոս չի վերջանար բառերուն ուժը : Ա-  
նոնք մեր կեանքին վրայ ալ կը ներգոր-  
ծեն : Դժուար է երեւակայել անոնց ազ-  
դեցութիւնը մարդկային շատ մը արարք-  
ներու վրայ, եւ անոնց գործած թէ՛ ա-  
ւերները, թէ՛ օրօտները : Բառերը յաճախ

նախապաշարու մտերու ուժը ունին, մանա-  
ւանդ անոնք որ իրր հոմանիշ կը գործած-  
ուին. եւ կը հաւատամ թէ ինչ որ պատ-  
ուելութիւնը մտեցուց մեր մէջ, ժամա-  
նակին պահանջներէն աւելի սա պատ-  
ուելի բառն էր, որ իր սկզբնական իմաս-  
տէն ելլելով կամաց կուտայ ծաղրանուն  
մը, չեմ գիտեր ինչի հոմանիշ մը դարձաւ.  
գիտէ՞ք այս պատուելի բառին պայթուցիկ  
ուժը, անգին տարողութիւնը (վիճարա-  
նութեան մէջ ի՞նչ զէնք է) : Պատուե-  
լի բառին անխնայ հարուածներուն տակ  
էր որ տապալեցաւ այդ ազգային հաստա-  
տութիւնը. մեր արդի ուսուցիչները հին  
պատուելիներուն շարունակութիւնը չըլ-  
լալին մեծ մասամբ այդ ծաղրանունին  
կը պարտին. անոր չ'արժանանալու վա-  
խին . . . Ուրիշ բառ մը. զեղեկ. կը հա-  
տամ նոյնպէս որ Պ. Ալիքարի երազած  
նրբութեան հասնելէ ինչ որ կ'արգիլէ մեր  
երկտասարգները եւ օրիորդները, սա զեղ-  
եկ բառն է. սա բառը (որուն գոյութիւ-  
նը, փակագծի մէջ խօսելով, կ'ապացու-  
ցանէ թէ մենք Արեւելքիցներս որքան  
մեր էութեամբը հակառակ ենք քարոզ-  
ուած իտէալին) մէջտեղէն վերցնելու է  
նախ, եթէ կուզուի պատրաստել քիչ շատ  
վայելուչ ու սիրուն ձևերով. սայօնին  
մէջ ճաշակաւոր վարուածքով երկտա-  
սարգութիւն մը, որուն պատուհասն է այդ  
բառը. եւ երկտասարգ մը գիտեմ որ ակ-  
նարկուած յատկութիւններէն կամաւ հրա-  
ժարեցաւ օրին մէջը, որովհետեւ արտին  
խորէն վերաբորուած էր իմանալով որ  
իրեն վեղեկ ըսելն անգ մը. ինքզինքին  
եկաւ, փոխեց իր ընթացքը, եւ սկսաւ  
լրջութիւն խաղալ : Անոնք որ, սիրահար  
հայտնիք հնաւանդ սովորութեանց, խո-  
րապէս զիտակից ազգային ոգւոյն, հակա-  
ռակ են եւրոպական նորոյթներուն մեր  
մէջ ներառումին, պարտին նայիլ այս զեղ-  
եկ բառին իր պահապան հրէշտակի մը  
վրայ, որ ցորչալի կ'աղւազն մնայ եւ հակէ  
աշխարհը, վատապ չկայ :

Ատենօք քննադատ մը կար որ իր աղջը-  
կան համար շնորհքով բառի մը մերժեց,  
պատուական եսակամի մը, որ բաւական  
կը շահի եղեր. «գործը իմաստակը տեղն է,  
ամա, անուշտ պաղ է, եսակամի . . . ». Եւ  
ասոր գէ՛մ, կան աղջիկներ որ չեն մերժեր,  
նիհար ամսականով երկտասարգներ, որով-  
հետեւ գրապիւր, եսակամի կ'ըստին. անա-  
նը պատուաւոր է . . . : Նոյն օրէնքով է  
որ եթէ մեր մէջ դրամ շնորհքով սովորու-  
թիւնը ճարակած չէ ինչպէս յեւրոպա,  
այս իրողութիւնը կը պարտինք թերեւս,  
սօլանքերի, պաքսախի բառերուն քան  
մեր բնածին պարկեշտութեան. քանի մը  
ոսկիի համար այս անգիւլ բառերը հագ-  
նիլ չէ. չըլլալիք բան է, չարքեր. ասոր  
համար է որ հայերը երբ դրամաշրթական  
զիտումներ ունենան, մեծ «Քօլքօ» մը զար-  
նելու ետեւէ կ'ըլլան. պաքսախի ըսուե-  
լի

լէս ետքը, պարէ անանկ բան մը ինքի մը  
արժէ : —Ընդհակառակը, տեսէ՛ք զաղիե-  
րէն բառը, escroc, սիրուն աշխարհա-  
մըն է, նոյն իսկ չեք, վարպետորդութե-  
ան գաղափար մը կուտայ ընդուն վը-  
րայ, եւ ծիծաղելի կը հանդիսացնէ զոնր.  
(գաղիերէն dupe, ուր որոշ կը յայտնուի  
խնդալու փափաքը) : Եթէ գաղափար  
կ'ուզեն դրամաշրթութիւնը վերցնել մէջ-  
տեղէն, խորհուրդ կուտամ իրենց պա-  
քախի պէս բառ մը հնարել... —Հոսմոս.  
ա՛ն քեզի ուրիշ հրաշալի բառ մը. ո՞ր սա.  
տանորդի գիտուածը ծնունդ տուաւ այս  
բառին, մեզ Տաճկահայոցս յաւերժական  
դատաւարտութեանը եւ Ռուսահայոց «ա-  
մենամեծ փառքին համար» : Ինչ որ ալ ը-  
նենք, ինչ որ ալ ըլլանք, թեւերով եթէ  
երկինք ալ թռչելու ըլլանք, մենք Ռու-  
սահայերուն համար հոսմոս ենք եւ. կը  
մնանք : Ռուսահայուն մը ուղեղը լանալով՝  
Տաճկահայոց վերաբերեալ խորշը եթէ  
խուզարկենք, ո՛չ մէկ զէնք, ոչ մէկ դի-  
տողութիւն պիտի գտնանք, միմիայն բառ  
մը, որ զայն ամբողջովին կը լեցնէ հոսմոս.  
երեւակայեցէ՛ք դեղաբանի դարակ մը որուն  
վրայ եթիք մը՝ arsenic կամ potasse եւ  
մէջը . . . պարապ կ'ընի չէ՛ հոսմոսն ա-  
զատիլ. մեր վճիռն է առիկայ, անվերակոշ,  
անքեկանելի :

Պատուելի բառին պէս, ուրիշ բառ մը  
կայ որ ծաղրանուն եղած ըլլալով կը ըս-  
պառնայ մեր ազգային մէկ «նուիրական»  
հաստատութեան : Դանի որ ալ պատուե-  
լի չիկայ, ո՛հ եւ զի կրնար դալ ան-  
շուշտ այդ բառին երկնական կիրարկում-  
ներէն. բայց ո՞ր անխորհուրդ գրողը ելաւ  
«տիրացու» բառին տուաւ ծաղրական դեր  
մը, ո՞ր ազգագրաւ հրապարակագիրը. ի՞նչ  
կ'ուզեն այդ բառի մարդերէն որոնք անձ-  
նութեամբ կրօնասէր աղքիւր հոգեկան  
մէկ կարեւոր պէտք կը գոհացնեն. եթէ  
սիրացունքը երթալով կը քիչնան կոր,  
պատճառը մեծ մասամբ «տիրացու» բա-  
ռին պատճառ այդ արկածն է : Մօտերս  
պիտի պատմեմ թէ ինչպէս բառի մը զոհ  
գնաց խեղճ հայ կնկան մը երջանկութիւնը :  
Կան նաեւ բացատրութիւններ, որոնց  
ազգեցութիւնը նուազ մեծ չէ : Եստ մար-  
դեր կ'արդիւրեւ բարիք ընելէ, ողորմելէ,  
ոչ թէ անխղճութեամբ, այլ սա բացատ-  
րութեան շնորհիւ «բէ՛ն բոնեց» որպէս  
զի չ'ըսուի թէ մէկը «իրենց քեզն բոնեց»  
որպէս զի ոչ ոք խորհի ատիկա, ոչ ինքը,  
ոչ բոնողը, ոչ ծանօթներ. խաղալու ուտել  
բացատրութիւնը պատճառ է որ շատ մը  
մարդեր աշուրնին չորս բանն չի խա-  
ռելու համար. խնդիր խառնելուն վրայ  
չէ՛, այլ այդ նուաստացողի խօսքին չ'են-  
թարկանելուն կը խորհիմնանք. թէ ծեծ ու-  
տողներուն թիւը մեր մէջ աւելի պակաս պի-  
տի ըլլար եթէ գոյութիւն չ'ունենար սա բա-  
քանչիւր խօսքը «փառաւոր ծեծ մը քաշել»  
զոր ընելը ճշմարիտ ենք մըն է, եւ որուն  
խորհելով թերեւ շատեր թեւերին կը  
սովորեն իրենց մէկ նմանք թիւ մը ուժով  
չ'իկու համար : Մ. Ս. Կիրիլովսկի.

## ԱՅԺՄԷՈՒԹԻԻԼՆ

### ՕՍՄ. ԶԲԱՀԱՌՈՐ ՄԸ

#### ՆԵՐԱՆ ԳԻՄԱՆԻ ԵՐԵՈՒԱՆ

Ինչ՞ զՏ Միւ Սթոն . . . :  
Ի՞նչ խորհրդաւոր գաղափար այս աղջ-  
կան պատմութիւնը որ մահուամբ կը վեր-  
ջանայ եւ որով կը զգաղի ամբողջ եւրոպա-  
կան մամուլը, առանց մոռնալու ամերի-  
կեանն ալ :

Աւազակները որ այդ ամերիկացուհին  
յափշտակելին, թուրքերէն էին, աղաւանա-  
ցիներ եւ կամ պոլիկարներ Գաղափար՝ ք.  
Բայց ինչ որ դրական է, Միւ Սթոնի  
գիւղը տաճկական հողի վրայ գտնուեցաւ  
եւ ասոր ամբողջ պատասխանատուութիւ-  
նը Սուլթանին կառավարութեան վրայ կը  
ծանրանայ :

Եւ որովհետեւ պատասխանատուու-  
թիւն մը, այս պարագային մէջ, դրամով  
միայն կրնայ թեթեւալ, բնաւ տարակոյս  
չկայ որ Միացեալ Նահանգներու կառա-  
վարութիւնը խոշոր հատուցում մը պիտի  
պահանջէ Միւ Սթոնի անշնչացեալ գիւ-  
ղին համար եւ Բ. Գուռը, ուղէ՛ չուզէ,  
պիտի վճարէ դուժար մը որուն քանակը  
տակաւին որոշուած չէ :

Կը յիշուի անշուշտ թէ անկէ տարի մը  
առաջ, նորէն հատուցումի խնդիր աը ծեծ-  
ուեցաւ երկու պետութեանց միջեւ, Հայ-  
կական ջարդերու միջոցին, ամերիկեան  
հպատակներու կրած վնասներու փոխա-  
րէն :

Բ. Գուռը չիտէ չիտակ եւ այդ անու-  
նով չուզեց վճարել պահանջուած 20,000  
ոսկին, բայց հաւանեցաւ որ Ֆիլադելֆիայ  
մէջ մարտանաւ մը շինուի իր հաշուին՝  
արժէքէն 20,000 ոսկի աւելի սուղ, որով  
բարձր պիտի ընէր իր եւ ամերիկեան պե-  
տութեան մէջ խնդրի նիւթ եղող պարտ-  
քը :

Այս անգամ ալ, տրուած ըլլալով հաշ-  
ուաւորագրութեան այդ եղանակը. բնական  
է որ, Օսմանեան կառավարութիւնը Միւ  
Սթոնի համար փոխանակ 10 կամ 20 հա-  
զար ոսկի կանխիկ դրամ վճարուի, նոր  
մարտանաւ մը պիտի ապսպրէ 10 կամ  
20 հազար ոսկի խաղալով :

Անա ինչու ըսինք թէ կնկան գիտէ  
ալ մարտանաւ կը շինուի :

Ամերիկայի հպատակ մը պակաս եւ  
Օսմանեան մարտանաւ մը աւելի, ո՛հ,  
ասոր համար չէ որ աշխարհիս խաղա-  
ղութիւնը կրնայ վրդովուիլ :

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԵՆ

ԱՆԿՎՈ-ՊՈԷՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶԻՐ. —Ա.  
հաւաստի այդ պատերազմին տաթիւ Անդ-  
լիական հանրային կարծիքին երկու մեծ  
ներկայացուցիչներուն յայտնած գաղափա-

## ԹԵՐԹՈՆ «ՓԱՐՈՍ» Ի (34)

### ԺԸՀԱՆ ՏՆՎՐԷ

## ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

### Նգիպազական կեանքի մեծագուտակ

ԳԼՈՒԽ Թ.

Եւ, ինչ որ սոսկալի էր, ինչ որ մօրը  
ամէնէն աղեկէ՞ք ցաւը կը գոյացնէր, սա  
էր որ կը տեսնէր սիրելի զաւկին հետք-  
հետք աւելի երկտասարգանալը, հետզհետէ  
աւելի աղւորեալը՝ իր վարդ գոյներուն  
չինծու փայլին ներքեւ՝ որոնք կը վա-  
ռէին անոր դալկացած գոյնը, անոր երե-  
ւոյն կուտային կեանքի ցոլք մը որ, ա-  
ւա՛ղ, ուրիշ բան չէր բայց միայն վախ-  
ճանին արագահասութեան աւելի ստոյգ  
ազդարարութիւն մը. միայն հասակը քիչ  
մը կը կորանար, չուէր այլեւս փառաւոր

կաղամախի իր վերապագումը. եւս քան  
զեւս կը կ'էր դէպ ի գիտելի, իբրեւ թէ  
հողը անգագաւոր դանի կոչէր, զան-  
գաղ փայտիցանքով մը, դէպ ի իրեն խո-  
նարհեցներ զայն, անտեսանելիին հօր  
կամբին տակ :

Ժէրմէն մինչեւ անգամ անոր անունը  
գիտէր, «Էլլա», անուրջի անուն մը, որ  
կը յարմարէր ուրուականի այդ անուշ  
դէմքին, ու մատաղատի Յրանապի աղ-  
ջիկը, ճաճանչափայլ գեղեցիկ աւողջու-  
թեանը մէջ. ուր իր քրան տարիներուն  
բովանդակ հիւթը կը պայթկար կարծես,  
իր քիչ մը տաւը զգացած նախանձին հա-  
մար ինքզինքը կը մեղադրէր. իրեն ոճի-  
մը կը համարէր նոյն իսկ րոպէ մը նա-  
խանձով ըլլալը իրեն հասակակից այդ իշ-  
խանուհիին նոնէին, որուն թագը իր գե-  
րեզմանին մարմարին վրայ դրուած ծա-  
ղիկներուն մէջ՝ քիչ ատենէն զարդ մը  
աւելի պիտի ըլլար միայն :

Բայց աստի, միթէ անոր թագին գը-

րեթէ թագաւորական անոր հարստու-  
թեանը նախանձած էր ժէրմէն :

Ո՛չ ապաքէն մանաւանդ գորովայն  
գթութեան այն նայուածքին, աչքերու  
այն երկար փայտիցանքին նախանձած էր՝  
որով քիչ մը աւալ շրջապատած էր զայն  
բրէնային տուած բարեւ . . . : Մարտէլ ի-  
րաւունք ունէ՛ր. Սթա Ապուհա՛ն ալ . . . :  
Հազիւ քանի մը ամիսներ անցեր էին  
այն օրէն ի վեր՝ երբ իր փոքրիկ բարե-  
կամուհին խօսք բացած էր, եւ ինքը ի  
զուր ուզած էր աչքերը զգիւլ ի զուր ու-  
զած էր ինքզինքը համոզել թէ Սթա Ա-  
պուհա կը խափուէր, նման այն ապուշ  
թուշներուն որ պոլիսինի ժայռի ծերպի  
մը կամ ծառի մը տերեւներուն մէջ ծած-  
կելով՝ կը կարծեն թէ վատնքէն զերծ  
կը մնան, կամաւորապէս կուրացած էր  
բրէնային եւ իրեն իսկ զգացումներուն մա-  
սին :

Աւա՛ղ, կը սիրէ՛ր զանի, սմիշա իրա՛ծ  
էր . . . անկէ զատ մէկը չէ՛ր կրնար սի-

րել. Սթէր էր, այս, այն անպատմելի ուրա-  
խութեան զգայութիւնը զոր կրնած էր այն  
օր որ բրէնը, մօրը յանդիմանութեանց  
յիշատակը իր սրտին մէջէն չ'իկու համար,  
այնչափ փափկութեամբ զինքը մխթա-  
րեր էր. սէր էր նաեւ ոյն յարամի հար-  
ուածը զոր կուրծքին մէջ կը զգար ամեն  
անգամ որ Մուրատ իրեն կը մօտենայ : Սթէ  
էին նաեւ այն հրատույնը շիրմաւանդը, այն  
յանկարծանաւ ցուրտերը որ զինքը կը  
ստեղծէին՝ երբ ան իրեն կը խօսէ՛ կամ  
ձեռքը կը բռնէր, սէր էր զարնել ի այն  
անյաղթելի երկնաւորութիւնը, այն անխոր-  
հուրդ սարսափը որով կը համակուէր ան-  
միջապէս որ բան մը ունենար անոր հար-  
ցնելիք, այն զգացումը որ խոնարհ եւ  
զուլանար կ'ընէր զինքը անոր առջեւ, զին-  
քը որ այնչափ գոռոզ էր, սէր զարնել  
ինչ որ մինչեւ այն աստի ծիծաղելի եր-  
կիւղ մը դարձած էր եւ որ ուրիշ բան չէր  
բայց նորաբողբոյ սիրոյ հրաշքին տար-  
ամ թոթովումը :







# Մ Ո Ւ Չ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Ց

## ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒԵՈՐՔԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆԱՅ 1848 ՎՅ

ՊԱՀԵՍՏԻ ԴՈՒՄԱՐ ՄԵԿ ՄԻԼԻՈՒ 563 ՄԻԼԻՈՒ 961 ՀԱՋԱՐ ՁԵՐՆԵՐ

Ապահովագրական ամեն կարգի դրուբիւնները կը գո ծարէ. խառնապահովագրութիւն, ամբողջ կեանք, գաւազան դրամագրութիւն, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒՉՈՒԱՆ ԼԱՅՑԻ սակագինը և ապահովագրութեան զանազան դրուբիւնները չափաւորաբար մի ապահովագրութիւն. — Առատաձեռն պայմաններ  
Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ Պ. Ն. ԲԻՐՁԻՍ և Ժ. ՎԱԼԵՆԻՆ, Ընդհ. ներկայացուցիչք:  
Աղբարանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակատար: Գ. ԵԿԱՆՈՅ ԴԵՐ-Դործակալ ի Գահիրէ

### ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳՆՈՒԹ 200,000,000 ՁԵՐՆԵՐ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ ՑԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԷ ԲՈՒՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր անոններու վրայ:

Ձեռնային և օտար երկրներու վրայ կ'աւտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:

Կը գանձէ եզրաւորի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:

Աւանդ ձեռնած գրամներուն փոխարէն կ'անխորշ պայմանաւանդ մուտքներ կ'աւտայ:

### ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

#### ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՅՈԼՍՈՅ ՄԻՋԵԻ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԻՈՅ ԳԻՐ

ԵԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն չորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) ղեկի Բիրթա, Իզմիր, Միտիլի եւ Կ. Պոլս:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւնոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղբարանդրիա ամեն Շաբթի օր, առաւօտեան ժամը 7ին:

ԵՐԱՆՈՒ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգեմաները Բիւր

րէա հանդիպելուն, Աթենք այցելել:

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՐ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) ղեկի Բոս-Սայիտ, Եփա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մէրսին և Իսկէնտըլուն:

ԺԱՄԱՆՈՒՄ. — Միեւնոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղբարանդրիա ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին:

Տասնըհինգ օրը անգամ մը՝ երթեկ կարմիր

Ծովու հետեւալ նաւահանգիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ՍՈՒՐԻՈՅ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ

—

Ճամբորդութեանց և ապրանց համար դիմել Ընկերութեան Աղբարանդրիոյ, Բոս-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Բուրքի ամեն մասնաճիւղերուն:

1--1902

### ՏՕՔ. Ս. ԹԱՀՄԻՉՕՅ

Փորձառու բժիշկ արդէն Պոլսոյ և Փոքր-Ասիոյ կողմերը տարիներով իւր արհեստը ի գործ դրած և յետոյ Բարիզի հիւանդանոցներուն մէջ ներքին հիւանդութեան իւր մասնագիտութիւնը կատարելագործած ըլլալով, վերջերս ժամանակ մը Սօֆիայի կեդրոնական հիւանդանոցին մէջ ծառայելէ ետքը այս անգամ եկած է հաստատուել ի Գահիրէ:

Առ ժամապէս կը գտնուի ի Զէյթուն, և իր աունը կ'ընդունի իրեն դիմող հիւանդները, առաւօտեան ժամը 10—12, և կէս օրէն յետոյ 3էն 5 Պ. Տիրիքի ղեկարարը յէզպէթէյէ, Գահիրէ:

Երեքշաբթի և շաբաթ օրերը աղբարաններ ձրի կը դարձանուին:

### ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻԻՇԵԱՆ

—X—

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՑՈՅՑԻ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԵՆԵՐՈՒ

ԴԱՀԻՐԷ, Մուսի փողոց,  
Ս. և Ս. Սիսնաիի վանատաւան դէմը

Ապրանայ զանազանութիւն

Երաշխատութիւն

Աժանութիւն

Ճոխ հաւաքածոյ Ամերիկեան և Ֆրանսական Ընօնկրաֆներու

Մանօր: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրասագրութեան տակ կը գտնուի:

ԱՅՅԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱՔ

### Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն

ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԵՒ ԱՌԵԻՏԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԻՈՐ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

Ի մէջ ԱՂԵՔԱՆԴՐԻՈՅ, ԲԻՐԷԻ, ԻԶՄԻՐԻ, Կ. ՊՈԼՍՈՅ, և ՕՏԷՍՍՈՒ

Հետեւեալ նոր և առաջնակարգ շոգեմաներով

|                                   |                               |
|-----------------------------------|-------------------------------|
| ԱՆԲԸՐԷՐՈՐ ՆԻՔՕԼԱ. տրղթ. թան. 5500 | 2ԻԽԱՉՈՅ տարողութիւն թան. 5500 |
| ԲԷՆ ՕԼԿԱ " " 5500                 | 2ԱՐ " " 5500                  |

ԵԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ ԿՈՆՏԻՆՈՒՆ  
մեկնում Աղբարանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍՍՈՒՑ, ԶՐԻՍՏՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍՈՒՆ. Կէ անմիջական հաղորդակցութիւն ընկերութեան այն շոգեմաններուն հետ որ ուղղակի կ'երթան ՍԷՎԱՍՏՈՓՈԼ, ՍԵԻ ԵՐՎԱՆՈՒ ԱՍԻԱԿԱՆ ԵԶԵՐՔՆԵՐԸ, ԿՈՎԿԱՍ, ԽՐԻՄ և ԱԶՈՅԻ ԵՐՎԱՆ:

ԵԱԲԱԹԸ ԱՆԳԱՄ ՄԸ մեկնում Աղբարանդրիայէն դէպ ի ԲՈՒ ՍՍՈՒՑ, ԵԱՅՍ, ՊԵՐՈՒԹ, ՏՐԻՊՈԼԻՍ, ՄԷՐՍԻՆ, ԲԻՈՍ, ԻԶՄԻՐ, ՍԵԼԱՆԿ, ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ:

ԴԻՄԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Աղբարանդրիա, Թիքաստ փողոց:

### ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խորիվական Հրամանագրով  
25 Յունվար 1898

Դրամագրութիւն Անգլ. ոսկի 1,500,000  
Պահեստի դրամ " " 193,000

Կառավարիչ. ՍԵՐ ԷԼՎԻՆ Բալթէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ. Մասնաճիւղեր. Աղբարանդրիա, Մանսուրա, Խարթում:

Եզրապահական Ազգային Դրամատունը կրնա զունի անոններ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

### ԴԺՈՒԱՐԱՄԱՐՍՈՒԹԻՒՆ

ԵՒ ՄՐՏԱԽԱՆՈՒԹԻՒՆ

Ստամբուլ. հիւանդութիւնը շատ անգամ դժուարամարտութիւն, սրտի խառնուրդ, լուծմունք, պնդութիւն և փսխում առաջ կը բերէ, ինչ որ հիմնապէս բուժելու համար պետք է ամեն ճաշէ վերջ ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐ անուն ազգու ղեղէն մէյմէկ քիչ առնել:

ԲԷԿԼԻՍ ՍԱՆԿԻՆԷՐԸ ուրիշ աղբարանի գեղերու նման չի խանգարեր ստամբուլ:

Կը ծախուի ամեն մեծ գեղարաններու մէջ:

29—316

## Գ. Է. ՍԷԼՎԱՃԵԱՆ

ԳԱՀԻՐԷ - ՄՈՒՍԳԻ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐՈՒ, ԳՈՀԱՐԵՂԵՆԱՅ ԵՒ ՅՕՆՕԿՐԱՑՆԵՐՈՒ